ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ, 2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3
I. Երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները..... 4
1. Երեխայի լավագույն շահի սկզբունք ..... 4
2. Օրինականության սկզբունք ..... 5
3. Համաչափության սկզբունք..... 6
4. Տվյալների անվտանգության սկզբունք ..... 7
5. Թափանցիկության սկզբունք ..... 7
1) Անձնական տվյալները մշակելու մասին երեխային իրազեկելու մշակողի պարտականությունը..... 8
2) Երեխայի՝ իր անձնական տվյալների մասին տեղեկություններ ստանալու իրավունքը ..... 8
II. Ուսումնական հաստատություններում երեխաների անձնական տվյալների մշակումը ..... 9
1. Անձնական տվյալների հավաքումը և պահպանումը..... 9
2. Հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակումը..... 10
3. Անձնական տվյալներին ծանոթանալու, դրանք ուղղելու և ոչնչացնելու երեխայի իրավունքը..... 11
4. Ուսումնական հաստատությունների կողմից երեխաների լուսանկարների օգտագործումը..... 12
5. Տեսահսկումը ..... 12
III. Համացանցում երեխաների անձնական տվյալների մշակումը..... 14
1. Համացանցում անձնական տվյալներին սպառնացող վտանգները և դրանց կանխարգելումը ..... 14
2. Երեխաների իրավունքները և կայքերի պատասխանատուների պարտականությունները ..... 16
1) Կայքի պատասխանատուի պարտականությունները ..... 16
2) Երեխաների մոռացված լինելու իրավունքը ..... 17
IV. Ձանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների հրապարակումը ..... 18
V. Պատասխանատվությունը..... 19

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցը պատրաստել է ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը: Ուղեցույցի նպատակն է ապահովել անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության միասնական մեկնաբանումը, իրազեկել երեխաներին, ծնողներին ու տվյալներ մշակողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին և բարձրացնել երեխաների անձնական տվյալների պաշտպանության մակարդակը:

Ուղեցույցը բաղկացած է 5 բաժիններից, որոնցում ներկայացված են երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները, անձնական տվյալների պաշտպանության ոլորտում երեխաների իրավունքները և տվյալներ մշակողների պարտականությունները (բաժին 1), ուսումնական հաստատություններում (բաժին 2), համացանցում (բաժին 3) և զանգվածային լրատվության միջոցներով (բաժին 4) անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները և երեխաների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման համար նախատեսված պատասխանատվությունը (բաժին 5):

Յուրաքանչյուր տվյալներ մշակող, անկախ հանրային (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ) կամ մասնավոր (իրավաբանական և ֆիզիկական անձինք) իրավունքի սուբյեկտ լինելու հանգամանքից, պարտավոր է անշեղորեն պահպանել երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները: Այդ սկզբունքները համընդհանուր և կիրառելի են ցանկացած բնագավառում (քաղաքացիական, աշխատանքային և այլն) երեխաների անձնական տվյալներ մշակելու հարաբերությունների նկատմամբ:

Կրթության ոլորտում, համացանցում և մամուլում անձնական տվյալների մշակմանը նվիրված բաժիններում նկարագրված են անձնական տվյալները հավաքելիս և պահպանելիս տվյալներ մշակողի պարտականությունների իրականացումը, հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելու և տեսահսկում իրականացնելու առանձնահատկությունները և երեխայի իրավունքների իրականացման ընթացակարգերը: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս աշխարհում դեռևս գոյություն չունեն համացանցում անձնական տվյալները պաշտպանելու արդյունավետ իրավական մեխանիզմներ,ուղեցույցում երեխաներին տրվում են մի շարք խորհուրդներ՝ կանխարգելելու համացանցում նրանց անձնական տվյալներին սպառնացող ռիսկերը:

Ուղեցույցը պատրաստվել է ՀՀ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության, ԵՄ Նախարարների խորհրդի հանձնարարականների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների և Ֆրանսիայի, Բելգիայի, Էստոնիայի, Իռլանդիայի խնդրո առարկա ոլորտի լավագույն փորձի հիման վրա:

## I. Երեխաների անձնական տվյալների[1] պաշտպանության սկզբունքները

Մշակողի կողմից ներքոհիշյալ սկզբունքների պահպանումը երաշխավորում է երեխայի անձնական տվյալների մշակման օրինականությունը:

### 1. Երեխայի[2] լավագույն շահի սկզբունք

Երեխայի լավագույն շահի սկզբունքի էությունն է ապահովել երեխայի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական առողջ զարգացումը, այլ կերպ ասած՝ նպաստել երեխայի անհատականության բնականոն զարգացմանը: Երեխան, որը չունի ֆիզիկական և հոգեբանական հասունության բավարար մակարդակ, ի տարբերություն չափահաս անձանց, ավելի շատ պաշտպանության կարիք ունի: Դա նշանակում է, որ երեխայի ոչ հասուն լինելը, որը նրան դարձնում է խոցելի, պետք է փոխհատուցվի համարժեք պաշտպանությամբ և հոգատարությամբ: Այդ համարժեք պաշտպանության ապահովմանն է ուղղված երեխայի՝ ներկայացուցչություն ունենալու իրավունքը: Երեխան իր իրավունքների ճնշող մեծամասնությունն իրականացնում է օրինական ներկայացուցիչների[3] միջոցով: Սակայն օրինական ներկայացուցչի կարգավիճակը բացարձակ ու անվերապահ գերակայություն չունի երեխայի կարգավիճակի նկատմամբ, և օրինական ներկայացուցիչները պարտավոր են հաշվի առնել երեխայի լավագույն շահը, երբ վերջիններս հանդես են գալիս երեխայի անունից: Բոլոր այն դեպքերում, երբ երեխայի լավագույն շահը հակասում է նրա օրինական ներկայացուցչի շահերին, նախապատվությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահին:

Երեխան չափահաս դառնալուն զուգընթաց ավելի մեծ մասնակցություն է ունենում իր իրավունքների, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրականացմանը: Այս դեպքում երեխան իր վերաբերյալ որոշումները կայացնում է ինքնուրույն կամ ծնողների հետ համատեղ (վերջիններս խորհրդակցում և հաշվի են առնում երեխայի կարծիքը):

Երեխայի լավագույն շահի սկզբունքը պահանջում է, որ երեխայի անձնական կյանքը հնարավորինս լավ պաշտպանված լինի՝ այդ առումով հատկապես կարևորելով երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Սակայն, երբեմն երեխայի լավագույն շահը և նրա անձնական կյանքը հարգելու իրավունքը կարող են միմյանց հակադրվել: Այս դեպքում նախապատվությունը տրվում է երեխայի լավագույն շահին: Նման դեպքեր հատկապես հանդիպում են բժշկական սպասարկման ոլորտում: *Օրինակ, երբ երեխային հրատապ բժշկական*

---

[1] Անձնական տվյալ, անձնական տվյալների մշակում, անձնական տվյալներ մշակող, անձնական տվյալների սուբյեկտ, երրորդ անձ, հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, կենսաչափական անձնական տվյալներ, հանրամատչելի անձնական տվյալներ, անձնական տվյալների ապանձնավորում, անձնական տվյալների ուղեփակում հասկացությունների սահմանումները տրված են ՀՀ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքի 3-րդ հոդվածում:

[2] **Երեխա** է տասնութ տարին չլրացած անձը (18 տարին լրանալու դեպքում անձը դադարում է երեխա համարվելուց և դուրս է գալիս ծնողական խնամքից): Գործունակությունը լրիվ ծավալով ծագում է չափահաս՝ 18 տարեկան դառնալուց հետո: Սակայն, 16 տարին լրացած անչափահասը անձնական տվյալների պաշտպանության իրավունքով սահմանված իր իրավունքները և պարտականությունները կատարում է անձամբ:

[3] **Օրինական ներկայացուցիչ** է երեխայի ծնողը, խնամակալը, հոգաբարձուն կամ որդեգրողը:

*օգնություն է անհրաժեշտ, ուսումնական հաստատությունը, ելնելով երեխային ճիշտ և տեղին բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունից, իր մոտ առկա երեխայի բժշկական տվյալները փոխանցում է բուժող բժշկին կամ բուժանձնակազմին՝ առանց երեխայի օրինական ներկայացուցիչների համաձայնությունը ստանալու:* Այս օրինակում երեխայի լավագույն շահը՝ նրան բժշկական օգնություն ցուցաբերելը, հակասության մեջ է մտնում նրա անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ (օրինական ներկայացուցիչների համաձայնությունը ստանալը), բայց նախապատվությունը տրվում է երեխայի լավագույն շահին, քանի որ տվյալ դեպքում խնդրո առարկա է երեխայի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը:

## 2. Օրինականության սկզբունք

**Երեխաների անձնական տվյալների մշակումը պետք է իրականացվի օրենսդրությանը համապատասխան և հետապնդի օրինական նպատակ:** Երեխաների անձնական տվյալների մշակումը կհամարվի օրինական, եթե այն բավարարում է միաժամանակ հետևյալ երկու պայմանները՝

1) Անձնական տվյալների մշակումը պետք է իրականացվի իրավական հիմքի՝ երեխայի (օրինական ներկայացուցչի) համաձայնության կամ օրենքի հիման վրա:
2) Տվյալների մշակումը պետք է իրականացվի օրինական և որոշակի (հստակ սահմանված) նպատակով:

Մինչև 16 տարեկան երեխայի անձնական տվյալները մշակելու համար համաձայնություն է տալիս նրա օրինական ներկայացուցիչը: 16 տարին լրացած երեխաների անձնական տվյալները մշակվում են վերջիններիս համաձայնության հիման վրա: Երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը տրվում է բանավոր կամ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: **Երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը ստանալու փաստը ապացուցելու պարտականությունը կրում է տվյալներ մշակողը:**

Երեխաների անձնական տվյալների մշակումը օրինական է նաև, եթե մշակումը նախատեսված է օրենքով: Մասնավորապես, օրենքի հիման վրա անձնական տվյալների մշակում իրականացվում է, երբ տվյալների մշակումը անհրաժեշտ է երեխայի անձնական տվյալներ մշակողի կողմից օրենքով իր վրա դրված իրավական պարտականությունը կատարելու համար: *Օրինակ, գործատուն մշակում է 16 տարին լրացած աշխատանքային պայմանագրով աշխատող անչափահասի անձնական տվյալները հարկային և սոցիալական ապահովության նպատակներով:*

Իրավական հիմքի հետ միաժամանակ երեխայի անձնական տվյալների մշակումը օրինական է, եթե դրանք մշակվում են միայն օրինական և որոշակի (հստակ սահմանված) նպատակով: Նախքան անձնական տվյալներ մշակելը (տվյալները հավաքելիս), տվյալներ մշակողը պետք է **որոշակիացնի (կոնկրետացնի) և հստակ մատնանշի** տվյալների մշակման նպատակը: Մշակողը երեխայի

անձնական տվյալները պետք է օգտագործի միայն այն նպատակով, որի համար դրանք հավաքվել են:

Յուրաքանչյուր նպատակի շրջանակը որոշվում է **համատեղելիության** չափանիշի հիման վրա: Դա նշանակում է, որ եթե անձնական տվյալները մշակվում են սկզբնական նպատակի հետ **համատեղելի**[4] նոր նպատակով, ապա համատեղելի նպատակով տվյալները մշակելու համար նոր իրավական հիմք չի պահանջվում, այլ դրանց մշակումը իրականացվում է սկզբնական նպատակի իրավական հիմքի (տվյալների սուբյեկտի համաձայնություն կամ օրենք) հիման վրա: Հետևաբար, սկզբնական նպատակի հետ **անհամատեղելի** նոր նպատակով անձնական տվյալների մշակման համար պահանջվում է նոր իրավական հիմք: *Օրինակ, 16 տարին լրացած երեխան իր բջջային հեռախոսահամարը կամ էլեկտրոնային հասցեն տվել է սպորտային հագուստի խանութին՝ նոր տեսականու և զեղչերի մասին հաղորդագրություններ ստանալու նպատակով: Եթե հետագայում այդ խանութը վաճառի նաև սպորտային սարքավորումներ և այդ մասին հաղորդագրություններ ուղարկի երեխային, ապա երեխայի հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն սպորտային սարքավորումների մարքեթինգի նպատակով օգտագործելը կհամարվի համատեղելի նպատակ, և այդ դեպքում երեխայի համաձայնությունը չի պահանջվի: Սակայն, եթե երեխան իր հեռախոսահամարը տվել է գրախանութին, որը հետագայում սկսում է վաճառել նաև էլեկտրոնային սարքավորումներ և այդ մասին հաղորդագրություններ է ուղարկում, ապա դա կհամարվի անհամատեղելի նպատակ և այս դեպքում անհրաժեշտ է ստանալ երեխայի համաձայնությունը:*

**Արգելվում է չսահմանված կամ անսահմանափակ նպատակներով անձնական տվյալների մշակումը:** Նման դեպքերում անձնական տվյալների մշակումը կհամարվի անօրինական և կառաջացնի օրենքով նախատեսված պատասխանատվություն:

**Տվյալներ մշակողը անձնական տվյալները կարող է փոխանցել երրորդ անձանց միայն երեխայի (օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ:** *Օրինակ, գրախանութը, որը մարքեթինգային նպատակով պահպանում է երեխայի էլեկտրոնային հասցեն, կարող է այն փոխանցել այլ կազմակերպություն հանդիսացող հագուստի խանութին միայն երեխայի համաձայնությամբ:*

## 3. Համաչափության սկզբունք

Համաչափության սկզբունքը պահանջում է անձնական տվյալները մշակելիս պահպանել հետևյալ երկու պայմանները՝

- պետք է մշակել միայն տվյալների մշակման նպատակի համար անհրաժեշտ անձնական տվյալները **(անձնական տվյալները նվազագույն քանակով մշակելու սկզբունք)** և
- տվյալները պետք է պահպանվեն ոչ ավելի, քան տվյալների մշակմամբ հետապնդվող նպատակի իրականացման համար անհրաժեշտ ժամկետը **(տվյալները սահմանափակ ժամանակով պահպանելու սկզբունքը):**

[4] Համատեղելի նպատակներ հասկացության սահմանումը տրված չէ, ուստի յուրաքանչյուր դեպքում պետք է մեկնաբանվի՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից:

Տվյալները նվազագույն քանակով մշակելու սկզբունքի համաձայն՝ կարող են մշակվել միայն այն անձնական տվյալները, որոնք մշակման նպատակի տեսանկյունից **համարժեք, տեղին և անհրաժեշտ են**:

## 4. Տվյալների անվտանգության սկզբունք

Երեխաների անձնական տվյալներ մշակողը պետք է համապատասխան **տեխնիկական և կազմակերպչական** միջոցառումներ ձեռնարկի՝ պաշտպանելու անձնական տվյալները պատահական կամ չթույլատրված ոչնչացումից կամ պատահական կորստից, ինչպես նաև չթույլատրված մուտքից, փոփոխումից կամ տարածումից պաշտպանելու համար:

Օրինակ, ուսումնական հաստատությունները պարտավոր են ձեռնարկել աշակերտների անձնական տվյալների գաղտնիության ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- ուսումնական հաստատության կողմից մշակվող երեխաների անձնական տվյալները պետք է պահպանվեն հուսալի ու բանալիով փակ վայրում և հասանելի լինեն միայն այն անձանց, ովքեր դրանց ծանոթանալու իրավունք ունեն իրենց աշխատանքային պարտականությունների կատարման ուժով (տվյալների գաղտնիության ապահովման միջոցառում);
- երեխաների անձնական տվյալները հնարավոր աղավաղումից, վնասումից պաշտպանելու կամ երրորդ անձանց տվյալների ապօրինի հրապարակումը կանխարգելելու արդյունավետ միջոց է նաև ուսումնական հաստատության անձնակազմի վերապատրաստումը (ուսուցումը) անձնական տվյալների անվտանգության ապահովման վերաբերյալ (տվյալների անվտանգության ապահովման միջոցառում);
- պետք է նախատեսվեն անվտանգության կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ: Օրինակ, *հակահրդեհային համակարգի, համակարգչային անտիվիրուսային ծրագրերի տեղադրում, համակարգիչ մուտք գործելու մուտքանունների և գաղտնաբառերի հաճախակի փոփոխում* (տվյալների գաղտնիության ապահովման միջոցառում);
- ձեռնարկվող անվտանգության միջոցառումները պետք է համարժեք լինեն տվյալների տեսակին և տվյալներին անվտանգությանը սպառնացող ռիսկերին:

## 5. Թափանցիկության սկզբունք

Թափանցիկության սկզբունքը ներառում է մի կողմից երեխայի անձնական տվյալներ մշակողի **պարտականությունը**՝ տեղեկացնելու անչափահասին կամ նրա օրինական ներկայացուցչին տվյալները մշակելու մտադրության վերաբերյալ, իսկ մյուս կողմից՝ երեխայի՝ իր անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու, **ինչպես նաև մշակվող տվյալները ուղղելու, ուղեփակելու և ոչնչացնելու**

**իրավունքը:** Թափանցիկության սկզբունքի նպատակն է բացառել անձնական տվյալների գաղտնի մշակումը:

**1) Անձնական տվյալները մշակելու մասին երեխային իրազեկելու մշակողի պարտականությունը**

Երեխայի անձնական տվյալները հավաքելիս մշակողը պարտավոր է երեխային կամ նրա օրինական ներկայացուցչին պարզ և հասկանալի ձևով տեղեկացնել անձնական տվյալների մշակման վերաբերյալ *(տվյալները մշակելու նպատակի, իրավական հիմքի, տվյալների ցանկի և դրանք հնարավոր օգտագործողների շրջանակի մասին):* Տվյալներ մշակողը երեխային կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկացնելու պարտականությունը կատարում է սեփական նախաձեռնությամբ՝ **անկախ վերջիններիս կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու պայմանի**:

Անկախ այն հանգամանքից, թե տվյալները հավաքվել են երեխայից, թե երրորդ անձանցից, մշակողը տեղեկացնելու պարտականությունից ազատվում է, եթե երեխան (օրինական ներկայացուցիչը) արդեն համապատասխան տեղեկություններ ունի նախատեսվող մշակման մասին: Տվյալներն երրորդ անձանցից (ոչ երեխայից և ոչ նրա օրինական ներկայացուցչից) հավաքելու դեպքում մշակողը ազատվում է տեղեկացնելու պարտականությունից, *եթե տվյալների մշակումը նախատեսված է օրենքով կամ մշակման ենթակա են հանրամատչելի անձնական տվյալներ:*

**2) Երեխայի՝ իր անձնական տվյալների մասին տեղեկություններ ստանալու իրավունքը**

Երեխան իրավունք ունի տվյալներ մշակողից ստանալ տեղեկություններ իր անձնական տվյալները մշակելու փաստը հաստատելու (թե արդյոք իր տվյալները մշակվում են, թե ոչ), մշակման իրավական հիմքերի և նպատակների, մշակվող անձնական տվյալների ցանկի և դրանք ձեռք բերելու աղբյուրի (ծագման) մասին: Երեխայի այս իրավունքը ժամանակային առումով ենթակա չէ սահմանափակման, ինչը նշանակում է, որ երեխան պետք է ողջամիտ հնարավորություններ ունենա տեղեկություններ ստանալու նաև անցյալում կատարված և ներկայում արդեն ավարտված տվյալների մշակման վերաբերյալ:

Տվյալներ մշակողը երեխայի անձնական տվյալները մշակելու վերաբերյալ տեղեկությունները պարտավոր է տրամադրել կամ հնարավորություն ընձեռել ծանոթանալու դրանց **գրավոր հարցումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում**: Երեխային իր տվյալների վերաբերյալ տեղեկությունները պետք է տրամադրվեն անվճար (մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկությունը) և հասանելի ձևով՝ երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր հարցման հիման վրա: Երեխայի տեղեկությունները նրան չպետք է վաճառվեն, իսկ որոշակի գումար վճարելը պետք է նպատակ ունենա փոխհատուցելու մշակողի՝ տեղեկությունները տրամադրելու հետ կապված ծախսերը:

Երեխան (օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի տվյալներ մշակողից պահանջել ուղղել, ուղեփակել կամ ոչնչացնել մշակվող անձնական տվյալները, եթե դրանք ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար: Մշակողը պարտավոր է երեխայի համապատասխան դիմումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել պահանջվող գործողությունը, իսկ մերժելու դեպքում՝ դիմումը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում երեխային տրամադրել պատճառաբանված գրավոր որոշում:

Երեխան իրավունք ունի իր տվյալները ուղղելու պահանջ ներկայացնել տվյալներ մշակողին, եթե մշակվող տվյալներում առկա են տառասխալներ, թվաբանական սխալներ կամ այլ վրիպակներ, ինչպես նաև, երբ տվյալները թարմացված չեն (օրինակ, երբ երեխան փոխել է իր բնակության հասցեն կամ հեռախոսահամարը):

Երեխան (օրինական ներկայացուցիչը) տվյալներ մշակողից կարող է պահանջել ջնջել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե դրանց մշակումը կատարվում է առանց իրավական հիմքի: Օրինակ, երբ երեխան համաձայնությունը հետ է կանչել կամ որոշ տվյալներ այլևս անհրաժեշտ չեն տվյալները հավաքելու նպատակի իրականացման համար: Այս դեպքում տվյալները մշակելու օրինականությունը պետք է հիմնավորի տվյալներ մշակողը, և նա պարտավոր է այդ կապակցությամբ ապացույցներ ներկայացնել, հակառակ դեպքում՝ մշակումը կհամարվի անօրինական:

Եթե տվյալների մշակումը վիճարկվում է դրանք ոչ ճշգրիտ լինելու կամ անօրինական մշակելու հիմքով, ապա երեխան կարող է պահանջել անձնական տվյալների ուղեփակում: Դա նշանակում է, որ տվյալները ոչ թե ջնջվում են, այլ պարզապես դրանց մշակումը ժամանակավորապես կասեցվում է մշակողի կողմից: Դա հատկապես կիրառվում է այն դեպքերում, երբ ոչ ճշգրիտ կամ անօրինական պահվող տվյալների շարունակական օգտագործումը կարող է վնասել երեխային:

## II. Ուսումնական հաստատություններում[5] երեխաների անձնական տվյալների մշակումը

### 1. Անձնական տվյալների հավաքումը և պահպանումը

[5] **Ուսումնական հաստատություն**՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան: Սույն ուղեցույցում ուսումնական հաստատություն հասկացության տակ նկատի է առնվում հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները (եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցներ, արհեստագործական ուսումնարաններ, քոլեջներ և միջին մասնագիտական ուսումնարաններ)[5]:

Երեխաներն ուսումնական հաստատություն ընդունվելիս լրացնում են անձնական տվյալների վերաբերյալ հարցաթերթիկ, որը հաստատության կողմից օգտագործվում է աշակերտների վերաբերյալ անձնական գործեր պատրաստելու նպատակով: Թափանցիկության սկզբունքի պահանջներն ապահովելու տեսանկյունից այդ հարցաթերթիկները, բացի անձնական տվյալների վերաբերյալ հարցերից, պետք է պարունակեն նաև տեղեկություններ անձնական տվյալները հավաքելու և մշակելու նպատակի, իրավական հիմքի, հավաքվող անձնական տվյալների հավանական օգտագործողների շրջանակի և երեխաների՝ իրենց անձնական տվյալներին ծանոթանալու, դրանք ուղղելու իրավունքների իրականացման ընթացակարգերի մասին: Եթե անձնական տվյալները փոխանցվելու են երրորդ անձանց (օր՝ Երևանի քաղաքապետարան, Կրթության և գիտության նախարարություն), ապա այդ մասին հարցաթերթիկները նույնպես պետք է նշում պարունակեն:

Համաչափության սկզբունքի պահանջները պահպանելու տեսանկյունից անձնական գործերում պետք է նշված լինեն աշակերտների միայն այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են ուսումնական հաստատության հետապնդած օրինական նպատակներին հասնելու համար: Արգելվում է երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների վերաբերյալ այնպիսի անձնական տվյալների հավաքումը և պահպանումը, որոնք անհրաժեշտ չեն հաստատության հետապնդած նպատակի համար: Օրինակ, ծնողների բարձրագույն կրթության վկայականները, նրանց մասնագիտության և աշխատանքի վերաբերյալ տեղեկությունները միշտ չէ, որ անհրաժեշտ են ուսումնական հաստատության հետապնդած նպատակի համար: Հաստատությունը պետք է գնահատի, թե արդյոք այդպիսի տվյալներն իսկապես անհրաժեշտ են: Միաժամանակ ուսումնական հաստատությունը պետք է աշակերտների անձնական տվյալները պահպանի ոչ ավելի, քան անհրաժեշտ է հետապնդվող նպատակի համար: *Օրինակ, երբ աշակերտը ավարտում է դպրոցը կամ տեղափոխվում այլ ուսումնական հաստատություն, ապա, ենթադրվում է, որ հետապնդվող նպատակը դադարում է գոյություն ունենալ, հետևաբար անձնական գործերը ենթակա են արխիվացման կամ ոչնչացման:*

Արգելվում է նաև ուսումնական հաստատությունների կողմից աշակերտների անձնական տվյալների օգտագործումը այդ անձնական տվյալները հավաքելու նպատակի հետ անհամատեղելի նպատակներով: *Օրինակ, երբ դպրոցը վերցրել և պահպանում է աշակերտի ծնողի կոորդինատները (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե), երեխայի հետ կապված հարցերով ծնողին դիմելու նպատակով, ապա ուսումնական հաստատությունը չի կարող ծնողների հեռախոսահամարներն օգտագործել մարքեթինգային նպատակներով՝ ուղարկելով կարճ հաղորդագրություններ որևէ մանկական ամսագրի վաճառքի մասին:*

## 2. Հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակումը

Ուսումնական հաստատությունը չպետք է մշակի աշակերտների այնպիսի տվյալներ, որոնք կարող են խտրականությունների պատճառ լինել: Ամենից հաճախ աշակերտների նկատմամբ խտրականությունների առիթ են հանդիսանում հատուկ կատեգորիայի անձնական տվյալները: Դրանք են երեխայի ազգային

պատկանելության, էթնիկ ծագման, կրոնական համոզմունքների և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները:

Նման տվյալները կարող են մշակվել, եթե դա հետապնդում է օրինական նպատակ և պայմանավորված է աշակերտի լավագույն շահով: *Օրինակ, դպրոցը հաշվանդամ աշակերտի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները կարող է հավաքել և պահպանել, որպեսզի ուսումնական գործընթացում ուսուցիչը նրա հիվանդության առանձնահատկությանը համապատասխան առանձնահատուկ մոտեցում ցուցաբերի:* Դպրոցը կարող է աշակերտի անձնական գործերում պահպանել նաև տեղեկություններ նրա արյան կարգի, ալերգիկ լինելու մասին: Նման տվյալների հավաքումը համարվում է իրավաչափ, քանի որ այն հետապնդում է օրինական նպատակ, այն է՝ անհրաժեշտության դեպքում երեխային պատշաճ բժշկական օգնություն ցուցաբերել:

Երեխայի կրոնական պատկանելության վերաբերյալ տեղեկությունների մշակումը կարող է հիմնավորվել միայն դպրոցի բնույթով (կրոնական դպրոց) և վարչական նպատակով (օրինակ՝ կրոնական դասերին մասնակցությունը) և միայն այն չափով, որը խիստ անհրաժեշտ է հետապնդվող նպատակի համար:

Երբեմն խտրականությունների առիթ կարող են լինել նաև աշակերտի անձնական, ընտանեկան կյանքի, սոցիալական վիճակի վերաբերյալ տեղեկությունները: Աշակերտի ընտանիքի ունեցվածքի և եկամուտների վերաբերյալ տեղեկությունները, որպես երեխայի սոցիալական վիճակի վերաբերյալ տվյալներ, կարող են մշակվել միայն, երբ առկա է երեխայի լավագույն շահը: *Օրինակ, երբ աշակերտի ծնողը սոցիալապես անապահով լինելը հավաստող փաստաթղթեր է ներկայացնում դպրոցին, որպեսզի ազատվի կրթական որոշ ծախսերից:*

Խտրականության առիթ հանդիսացող բոլոր տվյալների գաղտնիությունը ապահովելու համար պետք է ձեռնարկվեն անվտանգության համարժեք միջոցառումներ (նման տվյալներ պարունակող անձնական գործերը պետք է վարվեն մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատողի կողմից և հասանելի լինեն միայն խիստ սահմանափակ թվով անձանց):

**Խտրականության առիթ հանդիսացող բոլոր տվյալների մշակումը պետք է կատարվի միայն երեխայի կամ նրա ծնողների բացահայտ և նախապես տրված համաձայնության հիման վրա՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:**

## 3. Անձնական տվյալներին ծանոթանալու, դրանք ուղղելու և ոչնչացնելու երեխայի իրավունքը

Աշակերտները (առնվազն 16 տարեկան) կամ ծնողները իրավունք ունեն ծանոթանալու աշակերտների անձնական գործերում առկա անձնական տվյալներին, ինչպես նաև ստուգելու, թե արդյոք այդ տվյալների մշակման տեսանկյունից երեխայի անձնական տվյալները ամբողջական, ճշգրիտ և թարմացված են, ինչպես նաև պարզելու, թե արդյոք այդ տվյալները ձեռք են բերվել օրինական ճանապարհով և տվյալների այդ ծավալը անհրաժեշտ է հետապնդվող նպատակի համար: Եթե դպրոցը խախտել է վերոնշյալ պայմանները, ապա վերջինս պարտավոր է երեխայի կամ նրա ծնողի պահանջով անհրաժեշտ գործողություններ

իրականացնել դրանք ամբողջացնելու, թարմացնելու, ուղղելու կամ ոչնչացնելու ուղղությամբ:

Աշակերտների անձնական տվյալներին ծանոթանալու ընթացակարգը պետք է հստակ սահմանվի ուսումնական հաստատության կողմից:

## 4. Ուսումնական հաստատությունների կողմից երեխաների լուսանկարների օգտագործումը

Ուսումնական հաստատությունները հաճախ իրենց ինտերնետային կայքերում կամ սոցցանցերի էջերում, ինչպես նաև ամսագրերում, լրագրերում տեղադրում են աշակերտների լուսանկարներ՝ հաստատության հետ կապված զանազան իրադարձությունների վերաբերյալ հրապարակումներում: *Օրինակ, N … ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ (անուն, ազգանուն) մասնակցել է ֆիզիկա առարկայի միջազգային օլիմպիադային և զբաղեցրել 2-րդ հորիզոնականը, այնուհետև այդ նյութի տակ տեղադրված է այդ աշակերտին նույնականացնող լուսանկարը:*

Լուսանկարը անձնական տվյալ է, ուստի այն ենթակա է պաշտպանության անձնական տվյալների պաշտպանության իրավունքի կանոններով: **Երեխային է պատկանում իր նկարի օգտագործման և տնօրինման բացառիկ իրավունքը**, ուստի ուսումնական հաստատության կողմից աշակերտի լուսանկարի օգտագործումը, այդ թվում՝ բազմացումը, տարածումը, հրապարակումը, կարող է իրականացվել միայն աշակերտի կամ նրա օրինական ներկայացուցչի նախնական համաձայնության հիման վրա: Սակայն ուսումնական հաստատության կողմից աշակերտների խմբային լուսանկար հրապարակելու դեպքում անհրաժեշտ չէ ստանալ աշակերտների կամ նրանց ծնողների համաձայնությունը, եթե այդ նկարը հեշտությամբ (անմիջապես, առաջին հայացքից) չի նույնականացնում աշակերտներին:

## 5. Տեսահսկումը[6]

Ուսումնական հաստատություններում տեսահսկում իրականացվում է **անձանց և գույքի պաշտպանության** նպատակով, ինչպես նաև **պաշտպանելու անչափահասներին վնասակար ազդեցություններից** (կանխելու աշակերտների միջև եւ նրանց հանդեպ բռնությունը, գողությունները, պատերի և դռների վնասումը, հաստատության գույքը և այլն): Տեսահսկում կարող է իրականացվել նաև ուսումնական հաստատությունների շենքերի արտաքին կողմում՝ **ուժեղացնելու անվտանգությունը դրա շրջակայքում** (կանխելու՝ բռնությունները, գողությունները կողմնակի անձանց մուտքը):

Նախքան տեսահսկման համակարգերի տեղադրումը ուսումնական հաստատությունը պետք է իրականացնի հնարավոր վտանգների ճշգրիտ և մանրակրկիտ ուսումնասիրություն՝ հաշվի առնելով նախկինում հաստատության

[6] Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը մշակել է տեսահսկման ուղեցույց, որտեղ համապարփակ ներկայացված են տեսահսկման իրականացման սկզբունքները և առանձնահատկությունները:
http://moj.am/storage/uploads/002Video_surveillance_guide.pdf

տարածքում կատարված պատահարները: Դպրոցում տեսահսկման համակարգ կարող է տեղադրվել, եթե այլ արդյունավետ միջոցներով (անձնական կյանք նվազ ներխուժող) հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին: Որպես տեսահսկմանը փոխարինող այլ արդյունավետ տարբերակներ առաջարկվում է դպրոցի տարածք մագնիսական քարտերով մուտք գործելը, անձնակազմի կողմից ուժեղացված հսկողություն իրականացնելը, որոնք կարող են իսկապես համարժեք լինել հետապնդվող անվտանգության ապահովման նպատակին:

Տեսախցիկների տեղադրման վայրերի ընտրությունը միշտ պետք է լինի **հետապնդվող նպատակին տեղին, համարժեք և ոչ ավելորդ**: Անձանց և գույքի, ինչպես նաև անչափահասներին վնասակար ազդեցություններից պաշտպանելու նպատակով դպրոցներում տեսահսկման համակարգերի տեղադրումը արդարացված է, եթե տեսահսկումն իրականացվում է մուտքերում, միջանցքներում, աստիճանավանդակներում և այն վայրերում, որտեղով որ տեղաշարժվում են ոչ միայն ուսումնական հաստատության անձնակազմը, աշակերտները, այլև ցանկացած անձ, որն այցելել է ուսումնական հաստատություն կամ նրա մերձակա տարածք: **Այդ համակարգերի տեղադրումը չպետք է հետապնդի կոնկրետ աշխատողին կամ անձանց որոշակի խմբին հատուկ վերահսկելու նպատակ**: Տեղադրվող տեսախցիկների քանակը, տեղադրման վայրը, ուղղվածությունը, տեսախցիկներով տեսաձայնագրում իրականացնելու ժամերը և տեսահսկման ենթակա անձանց կողմից իրականացվող աշխատանքի բնույթը պետք է հաշվի առնվեն տեսահսկման համակարգի համաչափությունը գնահատելիս:

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա կանոնակարգ, որը հստակ կսահմանի տեսահսկման համակարգի օգտագործման պայմանները և նպատակները, տեսագրությունները դիտելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ովքեր իրավունք ունեն դիտել տեսագրությունները, տեսագրությունների պահպանման առավելագույն ժամկետը և տեսահսկվող անձանց, այդ թվում՝ երեխաների իրենց անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքի իրականացման պայմանները:

Դպրոցների որոշ վայրերում (դասասենյակ, ուսուցչանոց) մշտապես տեսահսկում իրականացնելու անհրաժեշտությունը հակակշռվում է աշակերտների, ուսուցիչների և այլ աշխատողների **անձնական կյանքը հարգելու իրավունքին** (right to privacy): Մասնավորապես, դասասենյակներում տեսահսկում իրականացնելը կարող է միջամտել և խոչընդոտել մի կողմից աշակերտների **կրթություն (ուսում) ստանալու և խոսքի (արտահայտվելու) ազատությանը**, իսկ մյուս կողմից՝ ուսուցիչների համար **ուսուցման (դասավանդման) ազատությանը**: Այս դիտողությունները պետք է հաշվի առնել նաև երեխայի իր անհատականությունը զարգացնելու իրավունքի (right to the development of the personality) համատեքստում: Անշուշտ, երեխայի՝ իր անհատականությունն աստիճանաբար զարգացնելու իրավունքը խեղաթյուրվում է, եթե վաղ հասակից սկսած՝ երեխան բնականոն երևույթ համարի իրեն տեսահսկելը:

Տեսահսկումը ինքնին չի ենթադրում ձայնահսկում (ձայնագրում): Աշակերտների և ուսուցիչների ձայնահսկում թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ դասավանդման որակի բարձրացման նպատակով (*օրինակ, բաց դասերի անցկացում և ուսուցիչների միջև փորձի փոխանակում*), որը պետք է ունենա դիպվածային (ժամանակավոր) բնույթ, այլ ոչ թե շարունակական

(ձայնահսկումը պետք է սահմանափակվի միայն բաց դասի տևողությամբ): Ձայնահսկում իրականացնելու դեպքում բոլոր անձինք (ուսուցիչներ, աշակերտներ) նախապես պետք է գրավոր այդ մասին տեղեկացվեն:

Ուսումնական հաստատություններում տեսահսկում իրականացնելիս աշակերտները, նրանց օրինական ներկայացուցիչները և հաստատության անձնակազմը պետք է տեղեկացվեն տեսահսկման համակարգի գոյության, տեսահսկողության իրականացման նպատակների և դրա պատասխանատուների մասին: Միաժամանակ, ուսումնական հաստատությունների բոլոր տեսահսկվող տարածքների տեսանելի հատվածներում պետք է տեղադրվեն նախազգուշացման վահանակներ՝ տեսախցիկների նկարահանման դաշտ մտնող բոլոր անձանց տեղեկացնելու տեսահսկման մասին:

Տեսագրությունները կարող են հասանելի լինել միայն այն անձանց, ովքեր պատասխանատու են հաստատության անվտանգության ապահովման համար: Օրինակ՝ տեսագրությունները կարող են նայել դպրոցի անվտանգության համար պատասխանատու անձինք, տնօրենը: Այդ անձինք պետք է պատշաճ մակարդակով տիրապետեն տեսահսկման իրականացման վերաբերյալ իրավական կանոններին:

Տեսահսկման համակարգով կատարված տեսագրությունները պետք է պահպանվեն խիստ որոշակի ժամկետով, որն ոչ մի դեպքում չպետք է գերազանցի 30 օրը: Վերոնշյալ ժամկետից բացառություն թույլատրվում է, եթե տեղի են ունեցել հանցագործության դեպքեր (գողություն, գույքի վնասում, անձի առողջությանը պատճառված վնաս), և այդ տեսագրությունները անհրաժեշտ են իրավապահ մարմիններին գործի նախաքննության իրականացման համար և հետագայում որպես ապացույց օգտագործվելու են դատարանում:

Արգելվում է տեսահսկում իրականացնել հանդերձարաններում և զուգարաններում:

## III. Համացանցում երեխաների անձնական տվյալների մշակումը[7]

### 1. Համացանցում անձնական տվյալներին սպառնացող վտանգները և դրանց կանխարգելումը

Օգտատիրոջ ցանկացած գործողություն մշտապես պահպանվում է համացանցում, և դրա բովանդակությունը չի մոռացվում: Այդ իսկ պատճառով գործնականում անհնար է ամբողջությամբ ջնջել նախկինում համացանցում տարածած տեղեկությունները: *Օրինակ, երբ օգտատերը իր ընկերոջ ֆեյսբուքյան պատին մեկնաբանություն է հրապարակում, ապա դրանք պահպանվում են սոցցանցի համակարգերում:*

Համացանցում օգտատիրոջ յուրաքանչյուր որոնման ժամանակ որոնման համակարգերը (google, yandex) նրա վերաբերյալ սովորաբար հավաքում են մեծ քանակությամբ տեղեկություններ (IP հասցե, cookie-ներում բովանդակվող տեղեկություններ, բանալի բառեր, որոնցով կատարվել են համացանցում

[7] ՀՀ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը մշակել է ուղեցույցներ Facebook-ում, Youtube-ում և Google-ում անձնական տվյալների պաշտպանության մասին: http://moj.am/storage/uploads/Facebook.pdf

որոնումները, այցելած կայքեր և այլն): Աստիճանաբար այդ որոնումների արդյունքում որոնման համակարգը ճշգրտորեն ճանաչում է օգտատիրոջ նախասիրությունները և այն բոլոր գովազդները, որոնց նա (օգտատերը) կարծագանքի:

Սոցցանցերը նույնպես լի են օգտատերերի հսկայական քանակի հասանելի անձնական տվյալներով, որոնք առանց ժամանակի սահմանափակման պահպանվում են համացանցում: Այսպես, հաճախ ֆեյսբուքյան օգտագործողները իրենց պատին գրառումներ են կատարում իրենց քաղաքական հայացքների, կրոնական համոզմունքների, սեռական կողմնորոշումների, ընտանեկան կարգավիճակի, առողջական վիճակի վերաբերյալ, հրապարակում են չկշռադատված դատողություններ, կարծիքներ, ինչպես նաև տեղադրում են իրենց անձնական կյանքի վերաբերյալ նկարներ*, օրինակ գիշերային երեկույթներում ոչ սթափ վիճակում, ալկոհոլի ազդեցության ներքո, կամ կիսամերկ վիճակում նկարներ, որոնք համացանցում պահպանվում են առանց ժամանակի սահմանափակման և հետագայում կարող են խիստ բացասական հետևանքներ ունենալ նրանց համար*:

Սա առավել վնասակար կարող է լինել անչափահասների համար, որոնք դեռահաս տարիքում կարող են չգիտակցված, չկշռադատված հրապարակումներ կատարել համացանցում, և արդեն չափահաս դառնալուց հետո դրանք կարող են վնասել նրանց հեղինակությանը: *Օրինակ, համացանցում երեխա ժամանակ կատարած հրապարակումները կարող են շատ տարիներ անց հեշտությամբ հասանելի լինել գործատուին և անձին աշխատանքի ընդունելը մերժելու առիթ դառնալ:*

Համացանցում անձնական տվյալների պաշտպանության լավագույն եղանակը զգուշավորություն ցուցաբերելն է կատարած հրապարակումների (համացանցում տարածած տեղեկությունների) նկատմամբ: Պրակտիկայում դրա իրականացումը բավականին դժվար է, քանի որ սոցցանցերի օգտագործումը միշտ հանգեցնում է անձի վերաբերյալ առավել մեծ քանակությամբ տեղեկությունների հրապարակման առանց իմանալու, թե դրանք ում հասանելի կլինեն, ինչ նպատակով և որքան ժամանակ կօգտագործվեն: Քանի որ անձը համացանցում իր տվյալները (անուն, նկար, բջջային հեռախոսի համար, IP հասցե) տնօրինելու և վերահսկելու արդյունավետ միջոցներ չունի, ուստի համացանցում երեխաների անձնական կյանքին, այդ թվում՝ անձնական տվյալներին սպառնացող վտանգները կանխարգելելու համար ՀՀ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը օգտատերերին տալիս է հետևյալ խորհուրդները՝

1. Օգտատերը պետք է գիտակցի, որ իր անձնական կյանքի պաշտպանությունը նախ և առաջ կախված է իրենից, ուստի անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել, թե ինչ է հրապարակում համացանցում: Անհրաժեշտ է կշռադատված գրառումներ կատարել Facebook-ի պատին, Twitter-ում, զանազան բլոգներում և ֆորումներում:
2. Նախքան համացանցում անձնական տվյալների տարածումը, օգտատերը պետք է որոշի, թե իր անձնական տվյալները ցանկանում է հասանելի դարձնել որոշակի, թե անորոշ շրջանակի անձանց (օր՝ արդյոք ցանկանում է իր ընկերոջ կամ ընկերուհու հետ նկարված նկարը հասանելի լինի միայն իր ընկերներին, թե իր անձնական էջ այցելող յուրաքանչյուր օգտատիրոջ):

3. Անհրաժեշտ է, որպեսզի օգտատերը ուժեղացնի սոցցանցերում իր անձնական էջերի գաղտնիության աստիճանը, որը հնարավորություն կտա իր անձնական էջում կատարած հրապարակումները (գրառումներ, նկարներ, վիդեոներ) հասանելի դարձնել միայն սահմանափակ թվով անձանց (բոլոր կամ որոշակի թվով ֆեյսբուքյան ընկերները): Միաժամանակ, անձնական էջի գաղտնիության ուժեղ աստիճան սահմանելը օգտատիրոջը հնարավորություն է տալիս որոնման համակարգերից թաքցնել իր անձնական տվյալների զգալի մասը և համացանցում վերահսկելի դարձնել իր անձնական տվյալների կառավարումը: Օրինակ, ցանկացած ժամանակ օգտատերը կարող է դրանք ուղղել կամ ջնջել:
4. Չի կարելի համացանցով այլ անձանց վերաբերյալ նյութեր հրապարակել, որոնք կարող են նրանց վնասել: Միշտ ինքներդ ձեզ տվեք այն հարցը, թե ինչպես դուք կզգաք, եթե այդ նույնը ձեր նկատմամբ ուրիշներն անեն: Չի կարելի զվարճանալու նպատակով սոցցանցերում ուրիշի անունով էջեր (հաշիվներ) բացել: Նախքան նկարներում այլ անձանց մատնանշելը նախազգուշացրեք և ստացեք նրանց համաձայնությունը:
5. Օգտատերը որոնման համակարգերով կանոնավոր կերպով պետք է ստուգի, թե համացանցում իր վերաբերյալ ինչպիսի հրապարակումներ են առկա: Որոնման համակարգը օգտատիրոջը տեղեկացնում է համացանցում առկա իր վերաբերյալ բոլոր հրապարակումների մասին: Օգտատերը կարող է պահանջել իր մասին տեղեկություններ հրապարակած կայքի պատասխանատուին ջնջել դրանցում առկա իր տվյալները: Կայքի պատասխանատուն կարող է նաև այնպես անել, որպեսզի որոնման համակարգերը չկարողանան ինդեքսավորել օգտատիրոջ տվյալները (օրինակ, երբ google-ով նշում ենք կոնկրետ անձի անուն-ազգանունը և տալիս որոնում, համակարգը չի բերում այդ անձի վերաբերյալ տեղեկությունները):
6. Օգտատերը այլ անձանց չպետք է փոխանցի իր գաղտնաբառերը, ինչպես նաև չպետք է ընտրի պարզ գաղտնաբառեր (օրինակ, իր ծննդյան տարեթիվը կամ իր մտերիմի անունը): Յուրաքանչյուր կայքում գրանցվելիս պետք է օգտագործել տարբեր գաղտնաբառեր:

## 2. Երեխաների իրավունքները և կայքերի պատասխանատուների պարտականությունները

### 1) Կայքի պատասխանատուի պարտականությունները

Կայքերի պատասխանատուները անձնական տվյալներ մշակողներ են, ուստի պարտավոր են երեխաների անձնական տվյալները հավաքել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է հետապնդվող նպատակին հասնելու համար: Չի կարելի անձնական տվյալները հավաքել ավելի մեծ քանակությամբ, քան անհրաժեշտ է տվյալները մշակելու նպատակի համար: Միաժամանակ արգելվում է հետապնդվող նպատակի հետ անհամատեղելի անձնական տվյալների հավաքումը: Կայքերի պատասխանատուները (խմբագիրները) պետք է հիմնավորեն օգտատերերից պահաջվող ցանկացած տվյալի հավաքումը, հատկապես առցանց

հաշիվների (account) բացման ժամանակ: Եթե որոշ տվյալների առումով հավաքումը հիմնավորվում է ծառայության նպատակով, որոշների մասով հավաքումը բոլորովին անհրաժեշտ չէ: Օր՝ հաշվի ստեղծումը հաստատելու համար էլեկտրոնային հասցե պահանջելը:

Կայքի պատասխանատուն երեխաների անձնական տվյալները մշակելիս պարտավոր է պարզ և հասկանալի ձևով երեխային տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- տվյալները հավաքելու նպատակները, ինչպես նաև տվյալների հասցեատիրոջ կամ հասցեատերերի ինքնությունը;
- պարտադիր կամ ոչ պարտադիր դաշտերը, որոնք առաջարկվում է երեխային լրացնել;
- երեխայի՝ իր տվյալներին ծանոթանալու իրավունքի մասին, որպեսզի վերջինս վերահսկի իր տվյալների հավաստիությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողից պահանջի ուղղել կամ ոչնչացնել/ջնջել իր անձնական տվյալները;
- երեխայի՝ իր անձնական տվյալների հավաքումը և օգտագործումն առարկելու իրավունքի մասին: Այս իրավունքը հնարավորություն է տալիս անմիջականորեն պահանջել կայքի պատասխանատուից ջնջել իր մասին հրապարակումները:

Վերոնշյալ տեղեկությունները պետք է անմիջականորեն նշված լինեն անձնական տվյալները հավաքելու հարցաթերթում՝ պարզ և ընկալելի ձևով:

Կայքի պատասխանատուի (խմբագրի) վերը թվարկված պարտականությունները կոչված են երաշխավորելու անձնական տվյալների թափանցիկ մշակումը:

Միաժամանակ, կայքի պատասխանատուն, ելնելով անձնական տվյալները օրինական մշակելու սկզբունքից, պետք է նախապես ստանա երեխայի ծնողների համաձայնությունը (տվյալները մշակելու իրավական հիմքը), եթե՝

- հավաքում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ (օր՝ երեխայի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ) կամ
- հավաքում է երեխայի լուսանկարները կամ
- երեխայի վերաբերյալ հավաքած տվյալները մարքետինգային նպատակներով (էլեկտրոնային հաղորդակցության միջոցների՝ sms, e-mail, միջոցով գովազդային բնույթի հաղորդագրություններ ուղարկելը) փոխանցելու է երրորդ անձանց:

## 2) Երեխաների մոռացված լինելու իրավունքը

Ինտերնետային կայքում հրապարակումներ կատարելու կամ առցանց հաշիվ բացելու պահին առնվազն 16 տարեկան անչափահասը անձամբ (որոշ կայքերի և սոցցանցերի դեպքում նաև 13 տարին լրացած անչափահասը) կամ նրա օրինական ներկայացուցիչը (երեխայի 16 տարեկանը չլրացած լինելու դեպքում) իրավունք ունի անմիջապես դիմելու ինտերնետային կայքի պատասխանատուին՝ պահանջելու ողջամիտ ժամկետում ջնջելու կայքում առկա երեխայի անձնական տվյալները: Եթե կայքի պատասխանատուն հրաժարվում է ջնջել երեխայի անձնական տվյալները

կամ չի պատասխանում նրա դիմումին, ապա անչափահասը կամ նրա օրինական ներկայացուցիչը իրավունք ունի կայքի պատասխանատուի անգործությունը, գործողությունը կամ որոշումը բողոքարկել Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն կամ դատարան: Սակայն որոշ դեպքերում երեխայի մոռացված լինելու իրավունքը ենթակա է սահմանափակման: Այդպիսի դեպքեր են համարվում, երբ համացանցում հրապարակված տվյալներն անհրաժեշտ են տեղեկատվության ազատության, հանրային գերակա շահի կամ կայքի պատասխանատուի կողմից իր օրինական պարտավորությունը (օրենքով սահմանված) կատարելու համար:

## IV. Զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների հրապարակումը

Զանգվածային լրատվության միջոցները **առանց երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ** երեխաների անձնական տվյալները կարող են հրապարակել, եթե հրապարակումը պայմանավորված է հանրային շահերի կամ երեխայի լավագույն շահի պաշտպանության անհրաժեշտությամբ ***եւ, եթե ապանձնավորված կերպով հնարավոր չէ հասնել այդ նպատակին:*** *Օրինակ, երեխան կորել է, և նրան գտնելու նպատակով զանգվածային լրատվության միջոցներով նրա անուն, ազգանունը, բնակության վայրը և լուսանկարը տարածելը օրինաչափ է, քանի որ խնդրո առարկա է երեխայի կյանքի և առողջության անձեռնմխելիությունը*:

Երեխայի լավագույն շահը միտված է նպաստել երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանը, ինչպես նաև նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանը: Յուրաքաչյուր երեխայի լավագույն շահը պետք է գերակայի ցանկացած այլ մտադրության նկատմամբ: Երեխայի լավագույն շահը որոշելիս պետք է հաշվի առնել երեխայի կարծիքը՝ իր տարիքի և հասունացման համաձայն: Բոլոր այն դեպքերում, երբ երեխայի լավագույն շահի սկզբունքը բախվում է երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, ապա պետք է գերակայի երեխայի լավագույն շահի սկզբունքը *(օրինակ՝ երեխայի կյանքի կամ առողջության պաշտպանության, երեխային բռնություններից, ֆիզիկական եւ հոգեկան տառապանքներից պաշտպանելու անհրաժեշտության դեպքում եւ այլն):*

Երեխաների անձնական տվյալների հրապարակման ցանկացած դեպքում լրատվամիջոցը (լրագրողը) պետք է զգուշավորություն ցուցաբերի երեխային չվնասելու համար՝ ***օգտագործելով անձնական տվյալներն ապանձնավորելու միջոցներ***[8]: Մասնավորապես, *երեխայի սոցիալապես անապահով և խոցելի լինելու մասին հաղորդումներ/նյութեր* պատրաստելիս լրատվամիջոցը (լրագրողը) պետք է օգտագործի երեխայի անձնական տվյալներն ապանձնավորելու միջոցներ (փոխել երեխայի անունը, օգտագործել միայն անվան առաջին տառերը, քողարկել լուսանկարում երեխայի դեմքը, փոխել երեխայի ձայնը եւ այլն)՝ կանխելու հաղորդման հրապարակման արդյունքում հնարավոր բացասական հետևանքները

[8] Տե՛ս ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից մշակված լրագրողների կողմից երեխայի վերաբերյալ լուսաբանումներ կատարելու էթիկական սկզբունքները(https://www.unicef.org/ceecis/media_1482.html):

երեխայի համար (շրջապատում, դպրոցում այլ երեխաների կողմից ծաղրանքի ենթարկվելը): Հաշվի առնելով երեխայի լավագույն շահը՝ լրագրողը պետք է ապանձնանավորի երեխայի անձնական տվյալները, եթե նույնիսկ առկա է օրինական ներկայացուցչի համաձայնությունը: Երեխայի սոցիալական ծանր դրության մասին հաղորդումներում լրագրողը կարող է չապանձնավորել երեխայի անձնական տվյալները, եթե առկա է օրինական ներկայացուցչի համաձայնությունը, երեխայի ծանր դրությունը անմիջական սպառնալիք է ստեղծել երեխայի կյանքի կամ առողջության համար և հնարավոր չէ երեխային ապանձնավորելու միջոցով ստանալ հանրության աջակցությունը նրան ծանր դրությունից դուրս բերելու համար:

Երեխաներն առավել խոցելի են, քանի որ իրենց ֆիզիկական եւ մտավոր զարգացման, իրավագիտակցության ձեւավորման ճանապարհին կարող են ամբողջությամբ չգիտակցել իրենց անձնական տվյալների պաշտպանության կարեւորությունը: Փոքր տարիքի հետեւանքով հնարավոր է՝ երեխաները չկարողանան պատշաճ պաշտպանել իրենց իրավունքները: Ելնելով նշված հանգամանքներից՝ երեխայի լավագույն շահը արգելում է լրատվամիջոցներին տարածել այնպիսի տեղեկատվություն, որը երեխայի *առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման և դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունի:*

Երբ գերակա հանրային շահը կամ երեխայի լավագույն շահը առկա չէ, լրագրողը երեխաներից հարցազրույց վերցնելուց, տեսանկարահանելուց, լուսանկարը կամ նրան վերաբերող փաստական նյութեր հրապարակելուց առաջ պետք է ստանա երեխայի (օրինական ներկայացուցչի) համաձայնությունը (գրավոր): Համաձայնությունը պետք է լինի կամավոր/ազատ, և բացառվի պարտադրանքի որևէ ձև: Երեխան և նրա ներկայացուցիչը պետք է հասկանան, որ իրենք խոսում են լրագրողի հետ, ով մտադիր է տվյալ նյութը տարածել լրատվամիջոցով: Լրատվամիջոցը (լրագրողը) պարտավոր է ապանձնավորել սեռական բռնության կամ շահագործման զոհ, ֆիզիկական կամ սեռական բռնություն գործադրած, հանցագործության կատարման համար դատավարտված կամ մեղադրվող երեխայի անունը, ազգանունը, բնակության վայրը և նրան նույնականացնող այլ տվյալները, քանի որ նման դեպքերում երեխաների համար հաճախ ծագում են բացասական հետևանքներ (օրինակ, սեռական ոտնձգության ենթարկված երեխային կարող են շրջապատում ծաղրել):

Այսպիսով, լրագրողն ազատվում է երեխայի անձնական տվյալներն ապանձնավորելու պարտականությունից, եթե առկա է երեխայի (օրինական ներկայացուցչի) համաձայնությունը և անձնական տվյալների հրապարակումը չի վնասի երեխայի լավագույն շահը կամ եթե հրապարակումն ինքնին բխում է երեխայի լավագույն շահից:

## V. Պատասխանատվությունը

Երեխան (օրինական ներկայացուցիչը) անձնական տվյալների պաշտպանությունը կարող է իրականացնել վարչական կամ դատական կարգով: Վարչական կարգով երեխան իր իրավունքները պաշտպանելու համար դիմում պետք է ներկայացնի ՀՀ անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

(այսուհետ՝ Գործակալություն)՝ ստուգելու անձնական տվյալների մշակման համապատասխանությունը անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք): Եթե երեխան կամ նրա օրինական ներկայացուցիչը Գործակալությանը դիմելու հետ միաժամանակ հայց է հարուցել նաև դատարան, ապա գործը ենթակա է քննության դատական կարգով, իսկ Գործակալության դիմումի հիման վրա հարուցած վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում Օրենքի պահանջների խախտմամբ երեխայի անձնական տվյալները մշակելու համար: Մասնավորապես, երեխայի անձնական տվյալները առանց օրենքով սահմանված հիմքերի, առանց օրինական նպատակի կամ օրենքով սահմանված կարգի խախտմամբ մշակելու, ինչպես նաև երեխայի (օրինական ներկայացուցչի) պահանջով մշակողի կողմից տեղեկատվություն չտրամադրելու կամ տրամադրման կարգը խախտելու համար սահմանված է **տուգանք**: Տարբեր խախտումների համար նախատեսված տուգանքի չափը տատանվում է 50.000 ՀՀ դրամից մինչև 500.000 ՀՀ դրամ (տես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրեսգիրք, հոդված 189.17):

*Անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում կամ մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը տվյալներ մշակողը վերացրել է թույլ տված խախտումը և այդ մասին ապացույցներ է ներկայացրել լիազոր մարմին:* Սա վկայում է այն մասին, որ սահմանված պատասխանատվությունն ունի ոչ միայն պատժելու, այլ նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումները կանխարգելելու նպատակ: